ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20-21-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

27 նոյեմբերի 2020թ. քաղ. Երևան

Նախագահությամբ՝ Ռ. Սինոյանի

անդամներ՝ Հ. Ռշտունի
Ա. Ալաբերքյան
Վ. Բերակչյան
Տ. Իսրաելյան
Բ. Ղալոյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 21/11/20թ. «Շիրակ-2»-«ՈՒրարտու-2» (ԱԽ064) խաղին՝ «ՈՒրարտու-2» թիմի ֆուտբոլիստ Ֆելիքս Խաչատրյանի (N 18409) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար):

2. 21/11/20թ. «Ալաշկերտ»-«Արարատ» (ԲԽ057) խաղին՝ «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Հրայր Մկոյանի (N 1483) հեռացման մասին (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար):

3. 21/11/20թ. «Վեստ Արմենիա»-«Արարատ-Արմենիա-2» (ԱԽ058) խաղի մասին.

Խաղը սկսեց 25 րոպե ուշացումով «Արարատ-Արմենիա-2» թիմը հանդիպման արձանագրությունը ներկայացրեց խաղասկզբից մեկ րոպե առաջ և ֆուտբոլիստների փաստաթղթերը ամբողջական չէին:

4. 21/11/20թ. «Վեստ Արմենիա»-«Արարատ-Արմենիա-2» (ԱԽ058) խաղի մասին. Դաշտի տեր թիմը փոխարինողների էլեկտրական լուսատախտակ չի ներկայացրել, փոխարենը ներկայացրել էին անսարք մեխանիկական լուսատախտակ:

5. 25/11/20թ. «Վան ֆզ»-«Ֆալկոնս ֆզ» (ՖԶ040) խաղին՝ «Վան ֆզ» թիմի ֆուտբոլիստ Արման Հակոբյանի (N 35745) հեռացման մասին (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար):

6. 21/11/20թ. «Ֆալկոնս ֆզ»-«Լոգիկոն» (ՖԶ034) խաղի մասին.

Հանդիպումը տեղի չի ունեցել «Ֆալկոնս ֆզ» թիմի պաշտոնյա չլինելու պատճառով:

7. 26/11/20թ. «Վեստ Արմենիա ֆզ»-«Արարատ-Արմենիա-ֆզ» (ՖԶ038) խաղի մասին. «Վեստ Արմենիա ֆզ» թիմի ներկայացուցիչը նախախաղային խորհրդակցությանը 13 րոպե ուշացումով է ներկայացել:

Հարց. 1

ՈՐՈՇՈՒՄ.

1. 21/11/20թ. «Շիրակ-2»-«ՈՒրարտու-2» (ԱԽ064) խաղին՝ «ՈՒրարտու-2» թիմի ֆուտբոլիստ Ֆելիքս Խաչատրյանի (N 18409) հեռացման համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Ֆելիքս Խաչատրյանին որակազրկել 1 խաղով, «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ին տուգանել 25000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 2.

ՈՐՈՇՈՒՄ.

2. 21/11/20թ. «Ալաշկերտ»-«Արարատ» (ԲԽ057) խաղին՝ «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Հրայր Մկոյանի (N 1483) հեռացման համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Հրայր Մկոյանին որակազրկել 1 խաղով, «Արարատ» ՖԱ-ին տուգանել 30000 ՀՀ դրամի չափով:

Հարց 3.

ՈՐՈՇՈՒՄ.

3. 21/11/20թ. «Վեստ Արմենիա»-«Արարատ-Արմենիա-2» (ԱԽ058) խաղին՝ խաղը 25 րոպե ուշացումով սկսվելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 43-րդ կետի համաձայն՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել 20000 ՀՀ դրամի չափով:

Հարց 4.

ՈՐՈՇՈՒՄ.

4. 21/11/20թ. «Վեստ Արմենիա»-«Արարատ-Արմենիա-2» (ԱԽ058) խաղին՝ փոխարինողների էլեկտրական լուսատախտակ չներկայացնելու, փոխարենը՝ անսարք մեխանիկական լուսատախտակ ներկայացնելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 62-րդ կետի համաձայն՝ «ՖԱ Վեստ Արմենիա ՀԿ»-ին տուգանել 20000 ՀՀ դրամի չափով:

Հարց 5.

ՈՐՈՇՈՒՄ.

5. 25/11/20թ. «Վան ֆզ»-«Ֆալկոնս ֆզ» (ՖՁ040) խաղին՝ «Վան ֆզ» թիմի ֆուտբոլիստ Արման Հակոբյանի (N 35745) հեռացման համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 41-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Արման

Հակոբյանին որակազրկել 1 խաղով, «ՖԱ Վան ՀԿ»-ին տուգանել 10000 ՀՀ դրամի չափով:

Հարց 6.
ՈՐՈՇՈՒՄ.

6. 21/11/20թ. «Ֆալկոնս ֆզ»-«Լոգիկոն» (ՖԶ034) խաղին՝ Ֆալկնոս թիմի պաշտոնյա չլինենալու պատճառով խաղը տեղի չունենալու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 40-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Ֆալկոնս ՖԱ ՀԿ»-ին տուգանել 50000 ՀՀ դրամի չափով:

Հարց 7.

ՈՐՈՇՈՒՄ.

7. 26/11/20թ. «Վեստ Արմենիա ֆզ»-«Արարատ-Արմենիա-ֆզ» (ՖԶ038) խաղին՝ «Վեստ Արմենիա ֆզ» թիմի ներկայացուցչի նախախաղային խորհրդակցությանը 13 րոպե ուշացումով ներկայանալու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 40-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ «ՖԱ Վեստ Արմենիա ՀԿ»-ին տուգանել 5000 ՀՀ դրամի չափով:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հիշեցում՝

ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի համաձայն Հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ.

Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: